

ԱՐՑԱԽԵԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Մարդկութեան ողջ պատմութեան ընթացքում կովկասը մշտապէս գտնուել է զանազան քաղաքակրթութիւնների բախման կենտրոնում։ Ունենալով աշխարհաքաղաքական բարենպաստ դիրք եւ երկար դարեր գտնուելով առեւտրային ճանապարհների խաչմերուկում՝ այս տարածաշրջանը միշտ առինքնել է աշխարհի խոշորագոյն կայսրութիւններին՝ ապահովելով նրանց տնտեսական եւ ռազմական զարգացումն ու բարեկեցութիւնը։ Մեր օրերում նոյնպէս Հարաւային կովկասը գտնւում է գերտէրութիւնների ուշադրութեան կենտրոնում։ Տարածաշրջանն առանցքային տեղ է զբաղեցնում համաշխարհային խոշոր առնուազն երեք գերակատարների (Ռուսաստան, ԱՄՆ եւ Եւրամիութիւն) աշխարհաքաղաքական հաշուարկների մէջ, եւ այստեղ բախւում են եւ այդ երեքի, ե՛ւ տարածաշրջանային երկու խոշոր գերակատարների (Իրան եւ Թուրքիա) շահերը¹։ Քանի որ Արցախն իր աշխարհաքաղաքական դիրքով ռազմավարական տեղ է գրաւում Հարաւային կովկասում, հետեւարար, արցախեան հակամարտութիւնն ու դրա պատճառով փակ սահմանները խոչընդոտում են տարածաշրջանում գերտէրութիւնների գլոբալ ծրագրերի իրականացումը։ Ուստիեւ միջազգային մակարդակում կայ որոշակի շահագրգութիւն Արցախի հարցը լուծելու, տարածաշրջանը աւելի կանխատեսելի ու կայուն դարձնելու համար։ Այս տեսանկիւնից միջնորդական կողմերի ջանքերն ու առաջարկութիւններն ուղղուած են խնդրի լուծման հաւանական ամենահեշտ

1 КУЛИЕВ, Ш., Карабахский конфликт с точки зрения геополитики- Альманах современной науки и образования, Москва 2009, № 1-2, 102-104

տարբերակին, ինչը պէտք է բխի բանակցող կողմերի դիրքորոշումներից:

Ակնյայտ է, որ արտաքին ուժերից իւրաքանչիւրը տարածալիքանն ընդգրկում է իր շահերի գօտում որպէս աշխարհաքաղաքական մէկ միաւոր: Այդ պատճառով էլ ցանկանալով օգտագործել տարածաշրջանի աշխարհաքաղաքական ներուժը՝ փորձում են վերացնել կամ նուազագոյն լարման հասցնել ներտարածաշրջանային հակասութիւնները²:

Ազատագրուած տարածքը 1918-1921 հիմնականում լինելով վիճելի համարուող Արցախի շրջանակներում՝ վերջինիս Ադրբեջանին բռնակցումից եւ ԼՂԻՄ ձեւաւորումից յետոյ ընդգրկուեց խորհրդային Ադրբեջանի կազմի մէջ, իսկ այն մասը, որը սկզբում մտնում էր ԼՂԻՄ կազմի մէջ, ժամանակի ընթացքում վարչական այլեւայլ փոփոխութիւնների արդիւնքում կցուեց Ադրբեջանին³: ԽՍՀՄ փլուզումից յետոյ սկսուած գոյապայքարում հայկական կողմն ազատագրեց խորհրդային Ադրբեջանի եօթ շրջանները, որոնք այժմ մտնում են ԼՂՀ կազմի մէջ: Ներկայումս ընթացող բանակցութիւններում Ադրբեջանն առաջնահերթօրէն պահանջում է տարածքային ամբողջականութեան ճանաչում, որը ենթադրում է ազատագրուած տարածքների «վերադարձ», այդ տարածքներում փախստականներով վերաբնակեցում եւ ամենավերջում Արցախի կարգավիճակի քննարկում, ինչը միանշանակ անընդունելի է հայկական կողմի համար, որի համար առաջնայինը նախ եւ առաջ Արցախի կարգավիճակի հարցն է, արցախի ժողովրդի ինքնորոշումը, կապը Մայր Հայրենիքի հետ եւ այլն:

Որպէս աշխատանքի հիմնական նպատակներ առանձնացուել են հետեւեալները՝

■ Արցախի պատմութիւնը հակիրճ ներկայացնելով՝ ցոյց տալ, որ այն Մեծ Հայքի պատմական Ռւտիք նահանգի (իսօքը ազատագրուած տարածքների մեծ մասի մասին է) հետ միասին, անյիշելի ժամանակներից եղել է բուն հայկական ու հայաբնակ տարածք, եւ միայն Ռուսաստանի կոմունիստական (բոլշեվի-

- 2 СУЛЕЙМАНОВ, А., Политика Турции и Ирана в Закавказье: сопоставительный анализ, Вестник Российского университета дружбы народов, Москва 2010, № 1, 53-59.
- 3 МИКАЕЛЯН, В., Нагорный Карабах в 1918-1923гг. - Сборник документов и материалов, Ереван 1992, 8-29

կեան) կուսակցութեան Կովկասեան բիւրոյի ոչ իրաւական որոշմամբ են դարձել խորհրդային Աղրբեջանի մի մաս,

■ արցախեան հակամարտութեան հիմնական պատճառները, չէ եւ ԼՂՀ դիրքորոշումների, Արցախի ժողովրդի ինքնորոշման կարեւորութիւնը ուազմաստրատեգիական, աշխարհաքաղաքական, տնտեսական եւ քարոզչահոգեբանական առումներով,

■ յետպատերազմեայ ժամանակահատուածում երկու երկրների կողմից իրականացուող գործողութիւնները:

Արցախը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի հիւսիսարեւելեան մասը կազմող Փոքր Կովկասի լեռնային համակարգի արեւելեան ու հարաւարեւելեան նախալեռնային շրջանները։ Այն աղեղնաձեւ ձգւում է Սեւանայ լճի աւազանը արեւելքից շրջապատող լեռներից դէպի հարաւարեւելք, մինչեւ Երասխ (Արաքս) գետը։

Պատմութեան տարբեր ժամանակաշրջաններում սկզբնաղբիւրները երկրամասը կոչում են տարբեր անուններով՝ Ուրտեխէ-Ուրտեխինի, Օրխիտենէ, Արցախ, Մաւրէք, Խաչէն, Սեւ այդի (Ղարաբաղ):

Բրոնզի եւ երկաթի դարաշրջաններին պատկանող դամբարանների, բնակատեղիների պեղումները (Ստեփանակերտ, Խոջալու, Կրկժան, Ամարաս, Մատաղիս, Խաչենագետի, Խխանագետի հովիտներ) վկայում են, որ այս տարածքը մտնում էր մ.թ.ա. 5-3-րդ հազարամեակից ձեւաւորուած, այսպէս կոչուած, Կուր-Արաքսի մշակութային համակարգի մէջ։ Ք.ա. 550-331 Հայկական թագաւորութիւնը, այդ թւում եւ Արցախը գտնում էին Աքեմենեան Պարսկաստանի թագաւորութեան ենթակայութեան տակ։ Ք.ա. Բ. դարի սկզբին Արտաշէսեան հարստութեան ձեւաւորած հայկական պետութեան սահմանները հիւսիսարեւելքում անցնում էին կուր գետով։ Յունա-հռոմէական մի շարք սկզբնաղբիւրների վկայութեամբ՝ այն նաեւ հայ էթնիկ տարրի սփուման հիւսիսարեւելեան սահմանն էր։ Այդ պետութեան կազմի մէջ մտնող Արցախը կառավարում էր տեղաբնիկ Առանշահիկ տոհմի կողմից (ըստ հայերի ծագման մասին առասպելի՝ այս տոհմի նահապետ Առանը հայերի նախահայր Հայկի սերունդներից է)⁴։

Ք.ա. Ա. դարի կէսերին Հայաստանը դառնում է Առաջաւոր Ասիայի ամենահզօր պետութիւնը։ Հայոց Տիգրան Մեծ արքան, կարեւորելով Արցախի դերը ուազմաստրատեգիական եւ տնտեսա-

4 Անդ., 6-7.

կան առումներով, այստեղ է կառուցում իր անունը կրող 4 քաղաքներից մէկը՝ Արցախի Տիգրանակերտը։ Այս քաղաքի աւերակները գտնւում են նախկին Աղդամ քաղաքի շրջակայքում։ Վերջին տարիներին այդ տեղանքում կատարուել են պեղումներ, որոնց արդիւնքում հաստատուել է Տիգրանակերտի՝ այնտեղ կառուցուած լինելու փաստը, եւ գտնուել են կարեւոր գտածոներ։ Նշենք, որ բացուել է վաղ քրիստոնէական շրջանում կառուցուած հայկական եկեղեցու պատը։



Նկար 1. Տիգրանակերտ (ՔԱ. 1-ին դար)

66- 428 Արցախը գտնւում էր հայ Արշակունիների թագաւորութեան կազմում, որի անկումից յետոյ Արցախը եւ Ուտիքը միացուեցին Կուր գետի հիւսիսում գտնուող Աղուանական թագաւորութեանը։ 469ին այս թագաւորութիւնը վերակազմաւորուեց պարսկական մարզպանութեան՝ պահպանելով Աղուանք (պարսկ Առան անունը)։

Ե. դարում Հայաստանի արեւելեան մասը, այդ թւում նաև Արցախը, չարունակում էր մնալ պարսկական տիրապետութեան տակ։ Երբ 450-451 մկուեց Վարդանանց սրբազն պատերազմը, այդ պատերազմին իր մասնակցութիւնն ունեցաւ նաև Արցախ աշխարհը, եւ Աւարայրի ճակատամարտում աչքի ընկաւ յատկապէս նրա փառապանծ այրուձին։ Ինչպէս ողջ Հայաստանում, այնպէս էլ Արցախում գիտակրթական եւ մշակութային աննախադէպ վերելք է սկսում յատկապէս Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծման չնորհիւ։ Պէտք է նշել, որ Մեսրոպ

Մաշտոցը Արցախի Ամարասի վանքում հիմնադրում է առաջին հայկական դպրոցը:

Աշխարհաքաղաքական տեսանկիւնից այս ժամանակահատուածում տեղի ունեցող գործընթացներն ու պատմութիւնը նկարագրող հաղորդագրութիւններում յստակ արձանագրում է մի կարեւոր փաստ, որ Արցախն ու Աղուանքը (Կովկասեան Ալբանիան) աշխարհագրական եւ վարչաքաղաքական առումներով իրենցից ներկայացնում են տարբեր երկրներ: Արցախի՝ որպէս առանձին երկրամասի գոյութեան մասին է վկայում «Աշխարհացոյցը» (ի. դար):

Յունա-հռոմէական եւ հայկական ժամանակի գրեթէ բոլոր հեղինակները մատնանշում են, որ Կուր գետը բնական սահման էր Հայաստանի եւ Կովկասեան Ալբանիայի միջեւ, եւ որ Կուր գետի աջակողմում գտնուող Ուտիքն ու Արցախը կազմում են Հայաստանի մի մասը: Մատնանշենք այդ հեղինակներից մի քանիսին՝ Ստրաբոն⁵, Պլուտարքոս⁶, Փաւստոս Բուզանդ. «Մուշեղ Մամիկոնեանը Կուր գետը դարձրեց սահման իր երկրի (Հայաստանի) եւ Ալբանիայի միջեւ, ինչպէս առաջ էր»⁷:


Ակսած Ժ. դարից այժմեան լեռնային Ղարաբաղի շրջանը, ինչպէս նաեւ նախկին Աղբբեջանական ՍՍՀի Շահումեանի, Քելբաղարի, Լաշինի շրջանները պատմական աղբիւրներում եւ աշխատութիւններում հանդէս են գալիս «Խաչէն» անուանմամբ: Խաչէնի թագաւորութիւնը, ինչպէս եւ անցեալում շարունակում էր մնալ Հայաստանի շրջաններից մէկը: ԺԱ.-ԺԲ. դարերի ընթացքում Արցախը կամ Խաչէնը ենթարկում է թուրք-սելջուկեան քոչուոր ցեղերի յարձակումներին, սակայն, շարունակում է պահպանել իր ինքնուրոյնութիւնը: ԺԲ. դարի վերջը եւ ԺԳ. դարի առաջին կէսը երկրամասի ծաղկման համար ամենաբարենպաստ շրջաններից էր: Այդ ժամանակ երկրամասում կառուցւում են ճարտարապետական այնպիսի արժէքաւոր համալիրներ, ինչպիսիք էին Յովհաննէս Մկրտչի եկեղեցին ու գաւիթը՝ Գանձասարում (1216-1260ական թուականներին), Դաղիկանքը, Կաթողիկէ եկեղեցին (1214), Գտչավանքի մայր եկեղեցին (1241-1248) եւ այլն: Դրանք բոլորն էլ իրաւամբ համարւում են միջնադարեան հայ ճարտարապետութեան գլուխգործոցներ:

5 ՍՏՐԱԲՈՆ, Աշխարհագրութիւն, 1964, Դ., Ե., ԺԱ., ԺԲ.:

6 ՊԼҮΤԱՐХ, Справительные жизнеописания, т. 2, Москва 1863, “Помпей”, 34.

7 ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, Ե. գիրք, գլ. 13 եւ 7:

ԺԳ. դարի 30-40ական թուականներին Անդրկովկասը գոաւմ են թաթար-մոնղոլները: Արցախ-Խաչէնի իշխան Հասան-Ջալալի ջանքերի շնորհիւ յաջողւում է երկրամասը մասնակիօրէն փրկել քարուքանդ լինելուց: Սակայն նրա մահից յետոյ (1262) թաթար-մոնղոլների գազանութիւնների զոհ է դառնում նաեւ Խաչէնը:



Նկար 2. Դադիվանի - 1214

Դրութիւնն էլ աւելի է վատթարանում ԺԵ. դարում թուրքական կարա-կոյունլու եւ ակ-կոյունլու քոչուոր ցեղերի տիրակալութեան տարիներին, որոնք փոխարինելու էին եկել թաթար-մոնղոլներին: Այս ժամանակահատուածում քարուքանդ արուեցին նախորդ դարերում կառուցուած ճարտարապետական շատ յուշարձաններ: Այս ժամանակներից սկսւում է կիրառուել երկրամասի Ղարաբաղ անուանումը, որը պարսկերէնից թարգմանաբար նշանակում է Մեւ այդի (Ղարա-սեւ եւ բաղ-այդի):

ԺԶ.-ԺԷ. դարերում Լեռնային Ղարաբաղը կամ պատմական Արցախը կազմում էր առանձին վիլայէթ՝ Գանձակ կենտրոնով:

ԺԼ. դարի 20ական թուականներին Սիւնիքում եւ Արցախում ծաւալուում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, որի նպատակն էր Ռուսաստանի օգնութեամբ թօթափել պարսկական լուծը: 1724ից Ղարաբաղի եւ Սիւնիքի հայերի պայքարն ուղղուեց օսմանական օկուպացիոն զօրքերի դէմ: Ահա թէ այդ մասին ինչ է գրուած Աղրբեջանի պատմութեան ակադեմիական հրատարակութիւններում. «Հակաթուրքական շարժումը յատկապէս լայն թափ ստացաւ Ղարաբաղում: Դա էր պատճառը, որ օսմաններին երկար ժամանակ չէր յաջողուում ծնկի բերել Ղարաբաղը, նոյնիսկ մարզը թուրքերի կողմից գրաւուելուց յետոյ ղարաբաղցիները շարունակում էին պայքարել զաւթիչների դէմ: Նրանք յարձակուում էին թշնամական ջոկատների վրայ, ոչնչացնում թշնամու կենդանի ուժը՝ միաժամանակ մնալով անորսալի: Թուրք զաւթիչները ձգտում էին դէպի Կասպից ծով: Նրանց այդ ձգտման մասին բացայաց գրուած էր թուրք փաշայի ցուցմունքներում, որը դերի էր ընկել ղարաբաղցիների մօտ: Հարցաքննութեան ժամանակ նա ուղղակի յայտարարել էր, որ սուլթանը հրամայել է ոչնչացնել հայերին»:⁸

Արցախահայութեան այդ պայքարը շարունակուեց մինչեւ 1735, երբ Անդրկովկասում պարսկական զօրքերը պարտութեան մատնեցին թուրքերին: Արդիւնքում ստեղծուեց ինքնատիպ վարչաքաղաքական միաւոր՝ Խամսայի մելիքութիւններ (մելիք-սեմական բառ է եւ նշանակում է «թագաւոր») անուանմամբ (արաբերէն «խամսա»՝ հինգ բառից): Ամենակարեւորը այստեղ, թերեւս, այն էր, որ մելիքներն անկախ էին եւ ոչ մէկին չէին ենթարկում, այսինքն՝ կարելի է ասել, որ Արցախը անկախ է եղել՝ կազմուած 5 մելիքութիւններից, որոնց բեկլարբեկը Դիզակի մելիք եղանն էր: Զնայած յետագայում մելիքները ներքին խառը իրավիճակի պատճառով թուլացան, սակայն իրենց կարգավիճակը կարողացան պահպանել մինչեւ ԺԹ. դարը:

1804-13 ուուս-պարսկական պատերազմի աւարտն ամրագրող 1813ի Հոկտեմբերի 12ի Գիւլիստանի պայմանագրի կնքումով Պարսկաստանն ընդմիշտ Ռուսաստանին է զիջում գրեթէ ողջ Կովկասը, այդ թւում նաեւ՝ Ղարաբաղի ու Գանձակի խանութիւնները: Այդ պայմանագրով վերջանում է ուուս-պարսկա-

8 ՀՈՒՅԵՅՆՈՎ, Ի. - ՍՈՒՄԲԱՏՋԱՆԻ, Ա. - ԳՈՒԼԻԵՒԻ, Ա. - ՏՈԿԱԺԵՒՍԿԻ, Ե., Աղրբեջանի պատմութիւն, Խո. 1., ԽՍՀՄ ԳԱ հրատարակչութիւն, Բաքու 1958, 307, 311-312:

կան առաջին պատերազմը, որը սկիզբ է դնում Անդրկովկասում Ռուսաստանի հաստատման գործընթացին:

1826-28 ռուս-պարսկական նոր պատերազմն աւարտուեց 1828ի Փետրուարի 10ի Թուրքմենչայի պայմանագրով, համաձայն որի Ռուսաստանին էին կցւում նաեւ Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւնները եւ Օրդուբաղի գաւառը, որով էլ աւարտուեց Արեւելեան Հայաստանի համարեա բոլոր հողերի միացումը Ռուսաստանին:

1840ին ցարական Ռուսաստանի կողմից հրապարակուած օրինագծով Անդրկովկասում իրականացւում է վարչական բաժանում. ստեղծուում են Վրացա-իմերեթեան նահանգը՝ Թիֆլիս կենտրոնով եւ Կասպիական մարզը՝ Շամախի կենտրոնով: Արեւելահայկական տարածքների մեծ մասն անցնում է Վրացա-իմերեթեան նահանգի կազմի մէջ, իսկ որոշները, այդ թւում նաեւ՝ Ղարաբաղը՝ Կասպիական մարզի:

ԺԹ. դարի 40ական թուականների երկրորդ կէսին վարչական նոր բաժանումների արդիւնքում կազմաւորուում են Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու, ինչպէս նաեւ մասնակիօրէն Անդրկովկասում գտնուող Դերբենդի նահանգները: Արեւելահայկական տարածքները առանձին գաւառների կարգավիճակով անցնում են վերոյիշեալ առաջին երեք նահանգների կազմը:

1867ի Դեկտեմբերի 9ի նոր կանոնադրութեամբ՝ Անդրկովկասը բաժանուեց հինգ նահանգների. Քութայիսի, Թիֆլիսի, Երեւանի, Ելիզաւետպոլի եւ Բաքուի: Արեւելեան Հայաստանի մի մասը մտնում է Երեւանի նահանգի մէջ, իսկ միւսը՝ Ելիզաւետպոլի եւ Թիֆլիսի նահանգների մէջ: Երեւանի նահանգի մէջ է մտնում նաեւ Նախիջեւանի գաւառը: Լեռնային Ղարաբաղը մտնում է Հիմնականում Ելիզաւետպոլի նահանգի մէջ: Կազմուեցին գաւառներ, որոնց տարածքը չպէտք է գերազանցէր 6500 քառակուսի վերասը, իսկ բնակչութիւնը՝ 80.000ը⁹: Այս վարչատարածքային բաժանումը, աննշան փոփոխութիւններով, պահպանուեց մինչեւ 1917ը:

Ամփոփելով աշխատանքի այս հատուածը՝ կարող ենք վստահօրէն նշել, որ հայ ժողովրդի ձեւաւորումից սկսած միշտ Արցախը եղել է բուն հայկական տարածք, ընդ որում՝ Հայաս-

9 МИКАЕЛЯН, В., Нагорный Карабах в 1918-1923гг.- Сборник документов и материалов, Ереван 1992, 12-13:

տանը, ընկնելով այլեւայլ օտար տիրապետութիւնների տակ, Արցախը հայկական այն շրջաններից մէկն էր, որոնք հիմնականում պահպանում էին իրենց կիսանկախ վիճակը: Յարական Ռուսաստանի այն քաղաքականութիւնը, որով Անդրկովկասը բաժանուեց վարչական շրջանների՝ տարածքների էթնիկական կազմը հաշուի չառնելով, յետագայում դարձաւ նորածին «Աղրբեջան» պետութեան հիմնական կոռուսներից մեկը Արցախն իր կազմի մէջ մտցնելու գործում, քանի որ, ինչպէս նշուեց, «Աղրբեջանը» հռչակեց իր անկախութիւնը ցարական Ռուսաստանի Բաքուի եւ Ելիզաւետպոլի նահանգների տարածքներում, իսկ Արցախը մտցուել էր Ելիզաւետպոլի նահանգի վարչական տարածքի մէջ:

Ինչպէս յայտնի է, ցարական Ռուսաստանում վարչատարածքային բաժանումը կատարում էր ոչ էթնիկ յատկանիշներով: Մինչեւ 1918ի մայիսի աւարտը, այսինքն՝ մինչեւ Անդրկովկասեան սեյմի արձակումը, եւ անդրկովկասեան երեք հանրապետութիւնների հռչակումը Ղարաբաղը մտնում էր Ելիզաւետպոլի նահանգի կազմի մէջ, այնուհետեւ Աղրբեջանի կառավարութիւնն այս պայմաններում յայտարարեց Բաքուի եւ Ելիզաւետպոլի նահանգները նորաստեղծ Աղրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան կազմի մէջ մտցնելու մասին: Աղրբեջանն այդ ակտով ձգտում էր իրեն ամրագրել Հայաստանի պատմական տարածքները՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը, որտեղ գերակշռում էր հայ բնակչութիւնը:

Սակայն Լեռնային Ղարաբաղի եւ Զանգեզուրի ժողովուրդը հրաժարուեց ճանաչել Աղրբեջանի Հանրապետութեան իրաւասութիւնը: Այստեղ իշխանութիւնը իրենց ձեռքը վերցրին հայկական ազգային նահանգային խորհուրդները, որոնք էլ կազմակերպեցին եւ գլխաւորեցին Աղրբեջանի դէմ ուղղուած պայքարը: 1920ի ապրիլի 25ին կայացավ Ղարաբաղի հայերի թիւով իններորդ համագումարը, որը Լեռնային Ղարաբաղը հռչակեց Հայաստանի անքակտելի մասը¹⁰:

Անդրկովկասի երեք ազգային պետութիւնների սահմանների որոշման եւ կազմաւորման նախնական շրջանում Լեռնային Ղարաբաղը չի եղել Աղրբեջանի կազմում: 1918ի մայիսի վերջից մինչեւ 1920ի Ապրիլ, այսինքն՝ մինչեւ Աղրբեջանում խորհրդային իշխանութեան հաստատումը, Լեռնային Ղարաբաղը եղել է անկախ:

1920 թուականի Յունիսից արցախահայութիւնը պայքարի ելաւ յանուն իր անկախութեան, որ նոյն տարուայ աշնանը վերաճեց համաժողովրդական հզօր ապստամբութեան։ 1921ի Յունուարից Լեռնային Ղարաբաղը կրկին ազատ էր եւ անկախ։ Աղբբեջանի կառավարութիւնը, ղարաբաղցի հայերի ազատագրական պայքարը ներկայացնելով որպէս հակախորհրդային շարժում, կարմիր բանակի զօրամասերի օգնութեամբ կարողացաւ ճնշել այն 1921ի Ապրիլի վերջին։ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական հանրապետութեան հոչակման յաջորդ օրն իսկ, Աղբբեջանի յեղկոմը 1920ի Նոյեմբերի 30ին ընդունեց Հայաստանի յեղկոմին ուղղուած մի պաշտօնական ուղերձ, որտեղ ասւում է։

«Աղբբեջանի բանուորագիւղացիական կառավարութիւնը, ստանալով ապստամբած գիւղացիութեան անունից Հայաստանում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան հոչակման մասին հաղորդումը, ողջունում է եղբայրական ժողովրդի յաղթանակը։ Այսօրուանից չեղեալ են յայտարարուում Հայաստանի եւ Աղբբեջանի միջեւ եղած սահմանները։ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը ճանաչուում են Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան բաղկացուցիչ մասը։»

Կեցցէ՛ Խորհրդային Հայաստանի եւ Աղբբեջանի բանուորաների ու գիւղացիների եղբայրութիւնն ու դաշինքը։

Աղբբեջանի Յեղկոմի նախագահ՝ Ն. Նարիմանով

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար՝ Հուսէյնով»¹¹։

Դեկտեմբերի 1ին այս հեռագիրը Բաքուի խորհրդի հանդիսաւոր նիստում ներկայացուեց իբրեւ հոչակագիր։ Սակայն Նարիմանովը Դեկտեմբերի 2ին այն հրապարակեց մէկ այլ խմբագրմամբ. «Զանգեզուրի եւ Նախիջեւանի նահանգների տարածքները Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասն են, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատաւոր գիւղացիութեանը տրուում է ինքնորոշման լրիւ իրաւունք»։ Մացնելով այդ փոփոխութիւնը՝ Նարիմանովը իր համար հիմք ստեղծեց Նոյեմբերի 30ին ընդունուած որոշումից յետագայում հրաժարուելու համար։

Բոլենիկեան գաղափարախօսութեան տարածման եւ յեղափոխութիւնների արտահանման գործում Ռուսաստանը մեծապէս

11 ГУЛИЕВА, Д., К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР 1918-1925: Документы и материалы, Баку 1989, 95-96.

կարեւորում էր Աղբբեջանական ԽՍՀի դերը եւ, հետեւաբար, հաշուի առաւ Նարիմանովի որոշումը¹²:

1921ի յուլիսի 4ին տեղի ունեցաւ կովբիւրոյի պլենումի նիստը, որտեղ ընդունուեց հետեւեալ որոշումը. «Լեռնային Ղարաբաղը մտցնել Հայաստանի ԽՍՀ կազմի մէջ», իսկ ազգերի ինքնորոշման իրաւունքի ձեւական ապահովման նպատակով կովկասեան բիւրոն որոշեց ճանաչել նաեւ Լեռնային Ղարաբաղում հանրաքուէ անցկացնելու անհրաժեշտութիւնը:

Աղբբեջանի Յեղկոմի նախագահ Նարիմանովը, դէմ լինելով թէ՛ Հայաստանին Լեռնային Ղարաբաղի միացմանը, թէ՛ հանրաքուէի անցկացմանը, Յուլիսի 4ի նիստում առաջարկում է, որ խնդրի քննարկումը վերջնական լուծման համար տեղափոխել ՌԿ(բ)Կ կենտկոմ՝ պատճառաբանելով, որ Ղարաբաղի հարցը կարեւոր նշանակութիւն ունի Աղբբեջանի համար. Այդ յայտարարութիւնից յետոյ կովբիւրոն որոշում է հարցի քննարկումը տեղափոխել ՌԿ(բ)Կ կենտկոմ:

Սակայն հարցի քննարկումը Մոսկուա փոխադրելու փոխարէն Յուլիսի 5ին հրաւիրում է կովբիւրոյի պլենումի արտահերթ նիստ, որտեղ Մտալինի ճնշման ներքոյ որոշւում է. «Լեռնային Ղարաբաղը թողնել Աղբի ԽՍՀ սահմաններում, նրան ընձեռելով մարզային լայն ինքնավարութիւն՝ Շուշի քաղաքում վարչական կենտրոնով»¹³:


Ընդսմին, միայն Շահումեանի շրջանը պահպանուեց իբրեւ առանձին վարչական միաւոր, իսկ մնացած հայաբնակ տարածքները բազմից վերածեւուեցին եւ 1988ին մտնում էին Խանլարի, Գետաբեկի, Շամխորի շրջանների կազմի մէջ. Աւելին, ԼՂԻՄի հիւսիսարեւմտեան սահմանը որոշելիս, Լաշինի եւ Քելբաջարի (Քարվաճառ) շրջանների բոնազաւթման միջոցով բացառուեց Հայաստանի հետ մարզի անմիջական շփման ամէն մի հնարաւորութիւն. Ուշագրաւ է, որ ԼՂԻՄի ստեղծման առաջին տարիներին ԼՂԻՄը սահման ունէր Խորհրդային Հայաստանի հետ:

Աղբբեջանական ԽՍՀ կազմում Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի գտնուելու ամբողջ ժամանակահատուածում այդ հանրապետութեան դեկավարութիւնը կանոնաւոր եւ հետեւողա-

12 ՄԱՆԱՍԵԱՆ, Ա., Ղարաբաղեան Հակամարութիւնը հայոց ժաղաքական գիտակցութեան հայելիում, Երևան 2003, 112:

13 ՈՒՂՈՒՔԱԲԵԱՆ, Բ., Արցախի պատմութիւնը. Ակզրից մինչեւ մեր օրերը, Երևան 1992, 200-250:

կանօքէն ոտնահարել է հայ բնակչութեան իրաւունքներն ու շահերը: ԽՍՀՄ կենտրոնական մարմինների առջեւ Լեռնային Ղարաբաղի հարցը բարձրացնելու փորձեր են ձեռնարկուել նաեւ յետպատերազմեան տարիներին¹⁴:



Նկար 3. 1926ի ԼՂԻՄի սահմաններ Խորհրդային Հայաստանի հետ¹⁵

Ղարաբաղեան շարժման նոր փուլը մի իւրատեսակ հանրաքուէով սկիզբ առաւ 1987ի երկրորդ կէսերից. Լեռնային Ղարաբաղի բնակչութեան զանգուածային հարցման արդիւնքում Հայաստանի հետ ԼՂԻՄի վերամիաւորումը պաշտպանող դիմումի տակ ստորագրեց աւելի քան 80 հազար մարդ: Հէնց այդ հանրաքուէն հիմք դարձաւ, որ ժողովրդական պատգամաւորների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի նստաշրջանը 1988ի

14 Ա.ԲՐԱՀԱՄՄԵՆՆ, Հ., Մարտնչող Արցախ 1917-2000, Գիրք Ա., 240-262:

15 http://www.nkrusa.org/country_profile/geography.shtml

Փետրուարի 20ին դիմի ԽՍՀՄ Գերագոյն խորհրդին՝ մարզը Աղբբեջանական ԽՍՀ կազմից դուրս բերելու եւ Հայկական ԽՍՀ կազմ մտցնելու միջնորդագրով:

Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գարգացման դինամիկան 1988ից ցայսօր

1988ին հայ ժողովուրդը միասնաբար ոտքի էր կանգնել պատմական անարդարութիւնը վերացնելու եւ Արցախը Մայր Հայրենիքի հետ վերամիաւորելու նպատակով: Շուրջ 70 տարի ծխացող հարցը կրկին իր արծարծումը գտաւ՝ կապուած ԽՄԿԿ Կենտկոմի գլխաւոր քարտուղար Մ. Գորբաչովի հոչակած եւ ԽՍՀՄում քաղաքական վարչակարգի ազատականացման սկիզբը դրած վերակառուցման քաղաքականութեան հետ, ինչը ժողովրդի կողմից ընկալուեց իբրեւ անցեալի սխալները շտկելու հնարաւորութիւն: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան մէջ եւս ծնուեց այն յոյսը, թէ հիմնահարցը կարող է ժողովրդավարական լուծում ստանալ, եւ ազգամիջեան յարաբերութիւններում գործնական կիրառում կը գտնեն միջազգային իրաւական նորմերը:

Օգտուելով երկրի բարձրագոյն քաղաքական մարմնի անվճռական դիրքորոշումից՝ Աղբբեջանի կոմունիստական իշխանութիւնները երկու ժողովուրդների պատմութիւնը կեղծելու եւ զանգուածային լրատուամիջոցներով ազգայնական հիստերիա հրահրելու ճանապարհով, խաղաղ լուծում պահանջող հարցը տեղափոխեցին ազգամիջեան հակամարտութեան հարթութիւն: 1988ի Փետրուարի 22ին ԼՂԻՄին սահմանակից Աղդամի շրջանից դէպի Ստեփանակերտ շարժուեց մի բազմահազարանոց ամբոխ՝ «ԼՂԻՄում կարգուկանոն հաստատելու համար»: Արիւնահեղութիւնը մեծ դժուարութեամբ յաջողուեց կանխել:

Լեռնային Ղարաբաղից հարիւրաւոր կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող աղբբեջանական Սումգայիթ քաղաքում 1988ի Փետրուարի 27-29 տեղի ունեցած հայերի զանգուածային ջարդերն ու սպանութիւնները դարձան դարաբաղեան հիմնահարցի հաւանական արդարացի լուծման շրջափակման՝ պաշտօնական Բաքուի քաղաքականութեան շարունակութիւնը:

Հաշուի առնելով ստեղծուած բարդ իրավիճակը՝ 1989ի Յունուարի 20ից ԽՍՀՄում առաջին անգամ ԼՂԻՄում մտցուեց կառավարման յատուկ ձեւ: Կազմաւորուեց Լեռնային Ղարաբաղի

ինքնավար Մարզի Յատուկ կառավարման կոմիտէ՝ ԽՄԿԿ կենտ-կոմի բաժնի վարիչ Ա. Վոլսկու նախագահութեամբ¹⁶:

1989ի Դեկտեմբերի 1ին Հայկական ԽՍՀ Գերագոյն խոր-հուրդը եւ ԼՀԻՄի Ազգային խորհուրդը, «Հիմնուելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրայ եւ արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնութեամբ տարանջատուած երկու հատուածների վերամիաւորման օրինական ճգումանը», համատեղ նիստում ընդունեցին որոշում Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորման մասին: Անյապաղ հետեւեց Աղրբե-ջանի ղեկավարութեան արձագանքը. սկիզբ առաւ սադրիչ գործողութիւնների մի նոր ալիք՝ օգտագործելով աղրբեջանական իշխանութիւնների ազգեցութեան ներքոյ գտնուող յատուկ Մըա-նի պարէտատունը եւ ԽՍՀՄ ներքին գօրքերին:

Օգտուելով Խորհրդային Միութեան եւ միջազգային իրաւունքի ընձեռած հնարաւորութիւններից՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութիւնը սկսեց ազգային ինքնորոշման գործընթաց, որի արդիւնքում ձեւաւորուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը: Ժամանակին գործող բոլոր օրէնքների համաձայն՝ Արցախում կազմակերպուեց հանրաքուէ, որի ընթացքում տեղի բնակչութեան 99,86 տոկոսը կողմ քուէարկեց Խորհրդային կայսրութեան կազմից դուրս գալու օգտին: Սակայն արցախցինների այդ իրաւական գործողութիւնները անընդունելի եղան նոյն ԽՍՀՄի կազմից նոր դուրս եկած Աղրբեջանի Հանրապետութեան համար, որի ղեկավարութիւնը փորձեց ուազմական ճանապարհով նորից նուաճել Լեռնային Ղարաբաղը:

1991ին Ղարաբաղեան պատերազմը ուազմական գործողութիւնների առաւել ակտիւ փուլ մտաւ, որի արդիւնքում Լեռնային Ղարաբաղի զինուած ուժերին յաջողուեց իրենց վերահսկողութեան տակ վերցնել պատմական Արցախի շրջանների գերակայ մասը: Պէտք է նշել, որ չնայած ողջ պատերազմի ընթացքում Աղրբեջանական բանակի կրած ծանր պարտութիւններին, 1994ի Յունուարին աղրբեջանական ղեկավարութիւնը սկսեց լայնածաւալ ուազմական գործողութիւններ Ղարաբաղի հիւսիսում, ինչի արդիւնքում կարողացան իրենց վերահսկողութեան տակ վերցնել Քարվաճառի որոշ տարածքներ: Այս փաստը ամենախօսուն վկայութիւնն է այն հանգամանքի, որ Բաքում որոշել էին ջանք ու եռանդ չխնայել Արցախի հայերի պատագրական պայքարը խեղ-

16 ՈՒՂՈՒԲԱՐԵՍՆ, Բ., անդ, 239-250:

ինքնավար Մարզի Յատուկ կառավարման կոմիտէ՝ ԽՄԿԿ Կենտ-կոմի բաժնի վարիչ Ա. Վոլսկու նախագահութեամբ¹⁶:


1989ի Դեկտեմբերի 1ին Հայկական ԽՍՀ Գերագոյն խոր-հուրդը եւ ԼՂՄի Ազգային խորհուրդը, «Հիմնուելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրայ եւ արձագանգելով հայ ժողովրդի՝ բռնութեամբ տարանջատուած երկու հատուածների վերամիաւրման օրինական ձգտմանը», համատեղ նիստում ընդունեցին որոշում Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւրման մասին: Անյապաղ հետեւեց Աղբբե-ջանի ղեկավարութեան արձագանգը. սկիզբ առաւ սադրիչ գոր-ծողութիւնների մի նոր ալիք՝ օգտագործելով աղբբեջանական իշխանութիւնների ազդեցութեան ներքոյ գտնուող յատուկ շրջա-նի պարհատունը եւ ԽՍՀՄ ներքին զօրքերին:

Օգտուելով Խորհրդային Միութեան եւ միջազգային իրա-ւունքի ընձեռած հնարաւորութիւններից՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութիւնը սկսեց ազգային ինքնորոշման գործընթաց, որի արդիւնքում ձեւաւորուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապե-տութիւնը: Ժամանակին գործող բոլոր օրէնքների համաձայն՝ Արցախում կազմակերպուեց հանրաքուէ, որի ընթացքում տեղի բնակչութեան 99,86 տոկոսը կողմ քուէարկեց Խորհրդային կայս-րութեան կազմից դուրս գալու օգտին: Սակայն արցախցինների այդ իրաւական գործողութիւնները անընդունելի եղան նոյն ԽՍՀՄի կազմից նոր դուրս եկած Աղբբեջանի Հանրապետու-թեան համար, որի ղեկավարութիւնը փորձեց ռազմական ճանա-պարհով նորից նուաճել Լեռնային Ղարաբաղը:

1991ին Ղարաբաղեան պատերազմը ռազմական գործողու-թիւնների առաւել ակտիւ փուլ մտաւ, որի արդիւնքում Լեռնային Ղարաբաղի զինուած ուժերին յաջողուեց իրենց վերահսկողու-թեան տակ վերցնել պատմական Արցախի շրջանների գերակայ մա-սը: Պէտք է նշել, որ չնայած ողջ պատերազմի ընթացքում Աղբ-բեջանական բանակի կրած ծանր պարտութիւններին, 1994ի Յունուարին աղբբեջանական ղեկավարութիւնը սկսեց լայնածաւալ ռազմական գործողութիւններ Ղարաբաղի հիւսիսում, ինչի ար-դիւնքում կարողացան իրենց վերահսկողութեան տակ վերցնել Քարվաճառի որոշ տարածքներ: Այս փաստը ամենախօսուն վկա-յութիւնն է այն հանգամանքի, որ Բաքուում որոշել էին ջանք ու-եռանդ շխնայել Արցախի հայերի ազատագրական պայքարը խեղ-

16 ՈՒՂՈՒԲԱՐԵԱՆ, Բ., անդ, 239-250:

Սակայն Մոսկուայի վերոնշեալ արձանագրութիւնը ստորագրելուց մի քանի օր անց Բաքուն հրաժարուեց կատարել իր պարտաւորութիւնները։ Դա պայմանաւորուած էր Աղրբեջանի նախագահի՝ Թուրքիա եւ Մեծ Բրիտանիա կատարած յաջողուած այցերով, որոնց ընթացքում ստորագրուել էին մի շարք փաստաթղթեր, ինչի արդիւնքում Աղրբեջանը կը ստանար բաւական մեծ աջակցութիւն այս երկրների կողմից եւ դրա դիմաց կվճարէր կասպիական էներգետիկ պաշարների շահագործման շահաւէտ «պայմաններով»¹⁹։



Նկար 4.

ԱՊՀ երկրների Միջխորհրդարանական ժողովի, Ղրղզստանի խորհրդարանի եւ Ռուսաստանի ԱԳՆի նախաձեռնութեամբ 1994-ի Մայիսի 3-5ը Բիշկեկում տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան, Աղրբեջանի եւ ԼՂՀի խորհրդարանական

19 МИРЗАЗАДЕ, Л., *Нагорно-карабахский конфликт и альтернативные пути его разрешения*, “Исторические науки”, Москва 2010, № 6, 57-64.

պատուիրակութիւնների հանդիպում: Հայաստանի պատուիրակութեան ղեկավարն էր Խորհրդարանի նախագահ Բաբեկն Արարքցեանը, ԼՂՀինը՝ Գերագոյն Խորհրդի նախագահի տեղակալ Կարեն Բաբուրեանը, ԱՀինը՝ Միլի Մշջլիսի նախագահի տեղակալ Աֆիյաղդին Գալիլովը: Այս հանդիպման ընթացքում կնքուելիք արձանագրութեան նախագիծը վ. Կազիմիրովը նախապատրաստել էր դեռ Մոսկուայում: Նախագծում խօսւում էր 1994ի Ապրիլի 15ի ԱՊՀ երկրների նախագահների յայտարարութեանը սատարելու մասին, ինչպէս նաեւ իւրայատուկ կոչ էր հակամարտող կողմերին 1994ի Մայիսի 8ի լրյա 9ի գիշերը դադարեցնել կրակը, եւ, հիմնուելով 1994ի Փետրուարի 18ի արձանագրութեան վրայ, իրաւաբանական համաձայնութեան ստորագրման միջոցով ամրապնդել ուազմական գործողութիւնների դադարեցումը: ԱՊՀ երկրների խորհրդարանների կողմից կար նաեւ առաջարկ Համագործակցութեան խաղաղապահ ուժերի ստեղծման հնարաւորութեան մասին:

Սակայն աղբբեջանական կողմը սկզբից չհամաձայնուեց ստորագրել փաստաթուղթը եւ միայն Աղբբեջանի ղեկավարութեան հետ երկարատեւ բանակցութիւններից եւ նրանց առաջարկով որոշակի ձեւական փոփոխութիւններից յետոյ ստորագրեց այն: Աղբբեջանի Խորհրդարանի նախագահ Ռ. Գուլիելմի ստորագրութիւնից յետոյ միայն հաստատուեց արիւնահեղութիւնը դադարեցնելու կոնֆլիկտի բոլոր կողմերի պատրաստակամութիւնը:

Աղբբեջանի ղեկավարութիւնը եւ անձամբ Հ. Ալիելը վերջապէս հրաժարուեցին ուժի եւ գէնքի միջոցով կոնֆլիկտը լուծելուց եւ այն տեղափոխեցին քաղաքական եւ դիւնագիտական դաշտ:

Մի քանի հանգամանքներ, որոնք ստիպեցին Ալիելին դադարեցնել ուազմական գործողութիւնները.

1. Բաքում արդէն գիտակցում էին, որ բանակի բարոյական եւ ֆիզիկական ամբողջական տարրալուծման պայմաններում խնդրի լուծման ուժային մեթոդն անհեռանկարային է եւ աւելի շուտ կը յանգեցնի լուրջ պարտութիւնների, քան յաջողութիւնների,

2. ԼՂՀ բանակն արդէն շարժուել էր դէպի հիւսիս, եւ կար գանձակը կորցնելու վտանգ, ինչը իսկական աղէտ կը լինէր Աղբբեջանի եւ անձամբ Հ. Ալիելի համար՝ վտանգի տակ դնելով

նրա իշխանութիւնը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով հանդերձ,

3. Ալիեւը քաջ գիտակցում էր, որ իր նաւթային դիւանագիտութիւնը սպասուելիք արդիւնքների չէր բերի, քանի որ ոչ մի կազմակերպութիւն ներդրումներ չէր անի մի երկրում, որտեղ ուազմական գործողութիւններ էին ընթանում,

4. տարածաշրջանում աւելի ու աւելի էր ուժեղանում գերտէրութիւնների ազդեցութիւնը, որոնք, ենելով իրենց տնտեսական եւ քաղաքական շահերից, շահագրգռուած էին խաղաղութեան հաստատման մէջ:

Մայիսի 19ին Վիեննայում տեղի ունեցաւ ԵԱՀԿ Մշտական Կոմիտէի 20րդ (ի.) նիստը, որտեղ կողմերը եկան այն եղրակացութեան, որ տարածաշրջանում խաղաղութեան պահպանման համար պէտք է պատասխանատուութիւն կրեն բոլոր երկրները, այդ թւում նաեւ՝ Ռուսաստանը: Ընդունուած հոչակագրում ԵԱՀԿի Մշտական յանձնաժողովը ողջունում էր հաստատուած հրադադարը եւ կողմերի պատրաստակամութիւնը՝ կնքելու վերջնական պայմանաւորուածութիւն խաղաղութիւն հաստատելու ուղղութեամբ, նաեւ նշում էր ԵԱՀԿ դիտորդների տեղաբաշխման մասին՝ խաղաղութեան հաստատումից 3 օրուայ ընթացքում²⁰:

Այս գործընթացն ամրապնդելու գործում մեծ դեր ունեցան յուլիսի վերջին ՀՀ այն ժամանակ պաշտպանութեան նախարար Սերժ Մարգսեանի, ԱՀ պաշտպանութեան նախարար Մ. Մամեդովի եւ ԼՂՀ բանակի հրամանատար Ա. Բաբայեանի ուղարկած համատեղ նամակը՝ Ռուսաստանի ԱԳՆին եւ ՊՆին, նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահ Եան Էլիասոնին, Ռուսաստանի նախագահի ներկայացուցիչ Վ. Կազիմիրովին: Այս նամակի հեղինակները արտայայտում էին իրենց կամքը շարունակել պահպանել Մայիսին հաստատուած զինադադարը: Այսպիսով 1994ի Մայիսի 12ին հաստատուած զինադադարը պահպանում է առայսօր:

Հրադադարի հաստատումից ի վեր, երկու երկրների նախագահների մակարդակներով խնդրի կարգաւորման համար, տարբեր երկրների միջնորդութեամբ տեղի են ունեցել բազմաթիւ հանդիպումներ: Ճիշտ է, որոշակիորէն դրական փոփոխութիւններ նկատելի են, սակայն երկու երկրների սահմանին տակաւին

20 CSCE Documents, 20th Plenary Meeting of the Permanent Committee of the CSCE, 19 May 1994, in QSCE Documents (1973-1997).

շարունակում են կրակոցները, ինչի հետեւանքով նորանոր զոհեր են լինում:

Արցախի հիմնահարցում կարեւորագոյն տեղ է զբաղեցնում Արցախի, հետեւաբար, նաեւ Հայաստանի Հանրապետութեան ռազմաստրատեգիական ու աշխարհաքաղաքական անվտանգութեան ապահովումը, որտեղ իր գլխաւոր մասնաբաժինն ունի ազատագրուած տարածքը:

Գաղտնիք չէ, որ տարածաշրջանում Հայաստանի ազգային անվտանգութեանը առաջին հերթին սպառնում են Թուրքիան եւ Աղրբեջանը: Դրանից ելնելով՝ հակիրճ ներկայացնենք այդ երկու երկրների արտաքին քաղաքականութեան առաջնահերթ ռազմավարական խնդիրները, որոնք անմիջականօրէն հարուածում են Հայաստանի ազգային անվտանգութեանն ու հայ ժողովրդի գոյութեանը: Նախեւառաջ նշենք, որ Թուրքիայի համար կարեւոր է ամրապնդել իր գիրքերը Կովկասեան ու Միջնասիական աշխարհառազմավարական տարածաշրջանում: Անկարայի այս նպատակին հասնելու գլխաւոր միջոցներից է թուրքախօս յետսովետական հինգ պետութիւնների՝ Աղրբեջանի, Ղղղղղատանի, Ղազախստանի, Ռուբեկստանի, Թուրքմենստանի հետ տնտեսական-քաղաքական յարաբերութիւնների խորացումը, հնարաւորութեան դէպքում ընդհուած միջպետական քաղաքական-ռազմական միութեան ստեղծումը, թէպէտ Աղրբեջանի հետ արդէն իսկ կայ բաւական ամրակուր ռազմական համագործակցութիւն: Իսկ ահա վերջերս ձեւաւորուած աղրբեջանական պետութեան ռազմավարական քաղաքականութեան առաջնահերթ խնդիրներից է՝

- Նախեւառաջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան որպէս այդպիսին չկայանալը,
- ԼՂՀ եւ ՀՀ ազգային անվտանգութեան համար ազատագրուած եօթ շրջանների յանձնումը իրենց, ռազմական տեխնիկա ու զինամթերք կուտակելը,
- իրենց համար բարենպաստ պայմաններում պատերազմ վերսկսել ու առաւելութիւն ստանալ,
- ապահովել սակաւաթիւ բնակչութիւն ունեցող եւ գլխաւորապէս Հայաստանով ու իրանով շրջափակուած, 1921ին անարդար կերպով Աղրբեջանական ԽՍՀին յանձնուած նախիջեւանի շրջանի ռազմական ու տնտեսական անվտանգութիւնը:

Հայաստանի Հանրապետութեան ռազմավարական խնդիրն է նախեւառաջ դիմագրաւել աղբբեջանա-թուրքական ճնշումներին, տեղեկատուական, դիւանագիտական, ռազմական դաշտերում տեղի ունեցող պարբերական հարուածներին։ Ապահովել Հայաստանի Հանրապետութեան, Արցախի տարածքային ամբողջականութիւնն ու բնակչութեան անվտանգութիւնը։ Արդէն մէկ հարիւրամեակից աւելի ձգուող այս հակամարտութեան առանցքում ընկած է մի կողմից՝ «հայկական սեպը» վերացնելու թուրքիայի ու Աղբբեջանի նպատակը, միւս կողմից՝ դրան հակադրուող Հայաստանի գոյապայքարը։ Ուստի՝ խօսքը ոչ թէ սոսկ Արցախի, այլ նոյն չափով Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան մասին է։ Ղարաբաղեան հակամարտութիւնը վերաբերում է Հայաստանի (ներառեալ Արցախի) գոյութեանը՝ լինել թէ չինելուն։ Արցախեան ազատամարտը ոչ միայն արցախահայութեան ազատագրութեան համար մղուած պատերազմ էր, այլ դրանից էլ առաւել՝ միակ հնարաւորութիւնն էր Սիւնիքը պաշտպանելու եւ Հայաստանը թուրք-աղբբեջանական գերիշխանութիւնից փրկելու համար։ Միմիայն չնորհիւ Ղարաբաղեան ազատամարտի, մենք կարողացանք տօնել փայլուն յաղթանակ եւ ամրացնել Հայաստանի ռազմական անվտանգութիւնը։

Սակայն, սրանով հանդերձ ներկայումս Հայաստանի ռազմավարական ընդհանուր դրութիւնը մնում է ծանր։ Շարունակւում է թուրք-աղբբեջանական շրջափակումը։ Աղբբեջանը վերագինում ու վարժեցնում է իր բանակը՝ նոր պատերազմ սկսելու եւ յաղթանակելու յոյսով։ 2004ին այդ երկիրը զինուած ուժերին 175 միլիոն դոլար է յատկացրել, իսկ 2011ին այդ գումարը հասել է արդէն 3.1-3.3 միլիարդ դոլարի, ինչը հաւասար է պետական զամփիւղի 20 տոկոսին։ Այնուամենայնիւ, ըստ վերլուծաբանների, թէպէտ Աղբբեջանը բանակին փոխանցում է շատ միջոցներ, դրանք արդիւնաւէտ կերպով չեն տնօրինուում, քանի որ չնայած այդ յատկացումներին՝ զինուած ուժերի իրական մարտունակութիւնը տպաւորիչ չէ²¹։

Թուրքիան աջակցում է Աղբբեջանին բոլոր բնագաւառներում՝ դիւանագիտական, քարոզչական, տնտեսական, հետախուզական եւ ռազմական։ Հարցի չլուծմանը նպաստում է նաեւ այն հանգամանքը, որ Աղբբեջանի քաղաքական վերնախաւի, եւ ան-

21 Oxford Analytica-ի փորձագէտների կողմից արուած հետազոտութիւնը՝ [/http://www.azatutyun.am/content/article/24330274.html](http://www.azatutyun.am/content/article/24330274.html)

ձամբ նախագահ ի. Ալիեւը, սեփական իշխանութիւնը պահելու ակնկալիքով, օրստօրէ աւելացնում է ռազմական բիւջէն, ինչն էլ երաշխիք է բանակի հզօրացմանը եւ, հետեւաբար, իշխանութեան շարունակականութեանը:

Ոչ վաղ անցեալում հայ ժողովուրդն իր մաշկի վրայ զգաց տնտեսական եւ ընդհանրապէս ազգային անվտանգութեան լուրջ պակաս. մենք 1990ականների սկզբին, գրեթէ ամբողջովին մեկուսացած դրսի աշխարհից, մաքառում էինք ազգային գոյապահանութեան համար: Քանի որ դրանից առաջ մեր տնտեսութիւնը կախման մէջ էր արտաքին տնտեսութիւններից (մասնաւրապէս՝ ԽՍՀՄ այլ հանրապետութիւնների), այդ տարիններին կոմունիկացիանների փակ լինելը կաթուածահար արեց հայկական տնտեսութիւնը: Նշենք, որ հայկական տնտեսութիւն ասելով՝ նկատի ունենք ՀՀ եւ ԼՂՀ տնտեսութիւնները, քանի որ դրանք անբաժանելի են եւ գտնւում են մէկ անվտանգութեան համակարգի մէջ: Այսպիսով, 1990ականների եւ սովի տարիններից մենք պարտաւոր ենք դասեր քաղել՝ ապահովելու մեր տնտեսական անվտանգութիւնը, ինչի միակ ուղին ինքնաբաւութիւնն է: Որքան բարձր է երկրի տնտեսական ինքնաբաւութեան մակարդակը, այնքան բարձր է տնտեսական անվտանգութեան աստիճանը, սակայն, բնականաբար, գործնականում դժուար է պատկերացնել ամբողջովին ինքնաբաւ տնտեսութիւն: Միեւնոյն ժամանակ պէտք է ձգտել առաւելագոյն անկախութեան ու ինքնաբաւութեան գոնէ տնտեսութեան ռազմավարական նշանակութիւն ունեցող ճիւղերում, մեր խորին համոզմամբ ինչպիսիք են՝ պարենային, ջրային ու էներգետիկ անվտանգութիւնը:

1988ից սկսած Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ թէ՛ աղրբեջանական եւ թէ՛ հայկական կողմից իրականացւում են տարատեսակ քարոզչութիւն եւ հակաքարոզչութիւն: Այսօր խիստ անհրաժեշտ է վերլուծել ու գնահատել աղրբեջանական կողմի՝ առանձին ուղղութիւններով տարուող քարոզչական աշխատանքների առանձնայատկութիւնները, դրանց կիրառման մեխանիզմները, աղբիւրներն ու գրանցուած արդիւնքները:

Ղարաբաղեան շարժման սկզբից եւեթ ձեռնամուխ լինելով հայկական կողմի օրինական պահանջատիրութիւնը չէզոքացնելուն եւ որդեգրելով հակառակ պահանջատիրութեամբ հանդէս գալու քաղաքականութիւնը՝ պաշտօնական Բաքուն հետեւողականօրէն փորձում է Հայաստանի Հանրապետութիւնը եւ ԼՂՀն վարկարեկելու եղանակով ամրացնել իր դիրքերը դարաբաղեան

հիմնախնդրի շուրջ միջազգային հանրութեան կարծիքի ձեւաւորման գործընթացում։ Օրինակ՝ Հայ-աղբբեջանական հակամարտութեան նախաձեռնող երկիրը՝ Աղբբեջանի Հանրապետութիւնը, ձեռնարկում է քարոզչական եւ հակաքարոզչական տարբեր միջոցներ սեփական տեսակէտներն ամրագրելու, պատերազմի դաշտում կրած պարտութիւնը տեղեկատուական դաշտում յաղթանակի վերածելու նպատակով²².

Ներկայումս աղբբեջանական կողմի քարոզչական ակտիվությունը ներառում է հետեւեալ ելակէտերը (որոնք մեծիմասամբ չեն համապատասխանում իրականութեանը).

1. Հայաստանը աղբեսիւ երկիր է, որ բռնագրաւել է Աղբբեջանի տարածքի քսան տոկոսը, ինչի արդիւնքում մէկ միլիոն աղբբեջանցի դարձել է փախստական,

2. Հայկական պետութեան ստեղծման բացառումը՝ վկայակոչելով առաջնային ինքնորոշման սկզբունքը,

3. «Հայկական ահաբեկչութեան» ակտիւ լուսաբանումը եւ, հետեւաբար, Աղբբեջանի՝ որպէս միջազգային ահաբեկչութեան ցանցի համար հանգրուան-երկրի քօլարկումը,

4. Հայաստանը՝ որպէս լրջափակման հետեւանքով քայլայուած տնտեսութիւն եւ կիսաքաղց բնակչութիւն ունեցող երկիր, ներկայացնելը՝ հիմնականում ներքին քարոզչութեան նպատակով,

5. Հայկական բանակի հանդէպ աղբբեջանական բանակի ռազմական գերազանցութեան տեսակէտի ամրագրմանն ուղղուած ջանքեր,

6. Հայոց Ցեղասպանութեան պատմական իրողութեան հերքումը եւ այս ոլորտում թուրքական քարոզչութեան հետ մէկ-տեղ տեսակէտների մշակում,

7. Հայերի կողմից աղբբեջանցիների «ցեղասպանութիւն» իրականացնելու մտացածին տեսակէտի զարգացումը՝ երկրի ռազմին դէմքերի կողմից ընդունուած օրենսդրական ակտերի միջոցով,

8. Ղարաբաղեան Հակամարտութեան՝ որպէս կասպեան նաֆթի եւ գազի պաշարների արտահանմանը խոչընդոտող եւ տարածաշրջանի կայունությունը վտանգող գործոնի քարոզումը:

22 АРЕШЕВ, А., Карабахский конфликт: информационно-идеологические аспекты, “Проблемы национальной стратегии”, Москва 2009, № 1, 186-190.

Հայկահայկական գրականութեան հրատարակմանն աջակցում են Աղրբեջանի պետական մարմինները, մասնաւորապէս՝ աղրբեջանական ԱԳՆՆ: Դեռեւս 1994ի նա պատրաստել էր տեղեկագրեր՝ տարբեր միջազգային ատեաններում շրջանառութեան մէջ դնելու համար, որոնք գետեղուել են նաեւ առանձին գրքոյկում²³: Դրանք պարունակում են Հայոց պատմութեան խեղաթիւրուած մելնաբանութիւններ, Ղարաբաղեան հիմնահարցի վերաբերեալ աղրբեջանական տեսակէտներ, ինչպես նաեւ հայկական կողմի գործողութիւնները միակողմանի ներկայացնող նիւթեր: Գրքոյկն ուղարկուել է արտասահմանեան բազմաթիւ գրադարանների:

Հայկական կողմի համար խիստ կարեւոր է ուրուագծել իր ելակէտերը քարոզչական եւ տեղեկատուական պատերազմներում, որոնք նուազ խոցելի եւ հիմնաւորուած պէտք է դարձնեն հիմնախնդիրը միջազգային հանրութեանը ներկայացնելու ընթացքում: Այս առումով կարելի է յիշատակել հետեւեալ կարեւոր քարոզչական ելակէտերը.

1. Աղրբեջանական պետութեան եւ աղրբեջանական ազգի ձեւալորման ու վաղ անցեալը եւ պատմական ուսոււրսի սահմանափակուածութիւնը, Լեռնային Ղարաբաղի նկատմամբ պատմական յաւակնութիւնների անհիմն լինելը, ԽՍՀՄ 1926ի մարդահամարում «աղրբեջանցի» ազգութեանը վերաբերող որեւէ յիշատակության բացակայութիւնը (Կովկասեան թուրքեր անունով յայտնի էթնիկ հանրութիւնը աղրբեջանցի էթնանուամբ ի յայտեկալ 1930ական սկզբներից միայն: 1918-1920 Աղրբեջանի Դեմոկրատական Հանրապետութիւնը թուրքական բանակի կողմից ստեղծուած կազմաւորում էր, որ չունէր միջազգայնօրէն ճանաչուած սահմաններ եւ սկզբնական շրջանում գտնուում էր թուրքական վերահսկողութեան տակ: Թուրքական գործօնի ազդեցութեամբ այն խորհրդայնացուեց 1920 ապրիլին),

2. Լեռնային Ղարաբաղում հայկական էթնոսի բնակութեան մասին չէզոք աղբիւրների վկայութիւնների ներկայացումը եւ, որպէս հիմնաւորող փաստարկ, աղրբեջանական գեղծարարութիւնները հերքող փաստերի տրամադրումը,

23 *The Aggression of the Republic of Armenia Against the Azerbaijani Republic*, Baku 1994, http://www.angelfire.com/ct2/cityofwinds/aggression_of_armenia.htm

3. Աղբբեջանի ղեկավարութեան կողմից տասնամեակներ շարունակ էթնիկ փոքրամասնութիւնների նկատմամբ տարուղութացման քաղաքականութիւնը, որի հետեւանքով կտրուկ նուազել է այլազգինների տեսակարար կշիռը աղբբեջանական բնակչութեան կազմում,

4. Նախիջեւանի օրինակով ԼՂի հայութիւնը էթնիկ զտման ենթարկուելու ճակատագրի կանխատեսումը,

5. Հայկական յուշարձանների միտումնաւոր ոչնչացման փաստերի ներկայացումը՝ որպէս հայկական ինքնութեան ի սպառնաջնջման պաշտօնական փորձ,

6. Հարաբաղեան հիմնահարցի վերաբացմանն ի պատասխան՝ աղբբեջանական կողմի բոնութիւնների եւ ջարդերի քաղաքականութեան որդեգրումը՝ Սումգայիթում եւ Բաքում՝ որպէս հայկական պահանջները չէզոքացնելուն ուղղուած քայլեր,

7. 1991ի աղբբեջանա-խորհրդային համատեղ ռազմական գործողութիւնների իրականացումը՝ Լեռնային Հարաբաղի հիւսիսային տարածքներից հայ բնակչութեանը վտարելու ուղղութեամբ («Օղակ» գործողութիւնը),

8. Միջազգային կառուցների, մասնաւորապէս՝ Եւրոպական խորհրդարանի եւ ԱՄՆ Սենատի ընդունած նախնական բանաձեւերի (1988-1989) բովանդակութեան ներկայացումը, որոնցով խորհրդային ղեկավարութեանը կոչ էր արւում յարգել ԼՂ հայ բնակչութեան ինքնորոշման իրաւունքը,

9. Աղբբեջանական կողմից իւլամական վարձկանների, մասնավորապէս՝ չեչնների եւ աֆղանների ներդրաւումը՝ հայկական ուժերի դէմ յարձակողական գործողութիւններում,

10. Աղբբեջանի տարածքում միջազգային ահարեկչութեան ցանցի հանգրուանելու, 1998 եւ 2001 Վաշինգտոնում եւ Նիւ Եորքում ԱՄՆ դեսպանների դէմ իրականացուած ահարեկչական գործողութիւններում աղբբեջանական հետքի առկայութեան փաստերի ներկայացումը,

11. Հարաբաղեան հիմնահարցի հանգուցալուծման վերաբերեալ Աղբբեջանի նախագահների, պաշտօնատար այլ անձանց ու առաջնորդների ագրեսիւ յայտարարութիւնների ներկայացումը միջազգային ատեաններում՝ որպէս աղբբեջանական կողմից հակամարտութիւնը բռնի միջոցներով լուծելու առաջնային վկայութիւն,

12. Աղրբեջանում հակահայկական մոլուցքի սանձազերծումը եւ դրա պետական հովանաւորութիւնը առաջիկայում երկու ժողովուրդների անհամատեղելիութեան պարագայում վկայութիւնն ու ապացոյցն են,

13. Աղրբեջանի՝ որպէս տոտալիտար պետութեան (որտեղ իշխում են անձի պաշտամունքը եւ իշխանութեան փոխանցման ժառանգական սկզբունքը, եւ որտեղ անհամատեղելի են պետական համակարգն ու ժողովրդավարութիւնը) կազմում ԼՂՀ ենթակայությունն անհնար է:

Պէտք է նշել, որ մեր երկիրն այս քաղաքականութիւնն իրականացնում է առանց աշխատանքների ու մօտեցումների քիչ թէ շատ կենտրոնացուած եւ ուղղորդուած համադրման եւ համակարգման՝ մինչեւ օրս լիարժէքօրէն չօգտագործելով սփիւրքում առկայ ռեսուրսները եւ հայկական համայնքների հնարաւորութիւնները, ինչն ուղղակիօրէն օգնում է հակառակորդի առաջընթացին այս ոլորտում: Պէտք է արձանագրել, որ եթէ սկզբնական շրջանում հայկական կողմը հնարաւորին չափ այս հարցում ապահովել էր առաջընթաց արեւմտեան ԶԼՄՆերում եւ միջազգային կառավարական կազմակերպութիւնների մակարդակում, առաջ հակամարտութեան ռազմական փուլի ընթացքում եւ յատկապէս աղրբեջանական կողմից, այսպէս կոչուած, նաւթային լորբինդի կիրառման արդիւնքում ներկայումս լուրջ իննդիր գոյութիւն ունի նոյնիսկ Հայաստանը ներկայացնելու առումով: Հայկական ազգայնական շարժման նկատմամբ մեծ մասամբ դրական մօտեցումները Արեւմուրտքի քաղաքական շրջաններում եւ մամուլում կտրուկ փոխուել են՝ որոշակիօրէն նկատելի աղրբեջանամէտ երանգներ ստանալով: Ուստի, խիստ հրատապ է դառնում պետական եւ պետականամէտ քարոզչութեան համակարգուած իրականացումն արտասահմանում՝ օգտագործելով համապատասխան ներուժը՝ միաժամանակ ուշադրութիւնից դուրս չըթողնելով նաեւ ներքին քարոզչութեան կարեւորութիւնը: ՀՀի եւ Արցախի դէմ տեղեկատուական եւ հոգեբանական պատերազմներ կիրառելու նպատակայարմարութեան մասին պարբերաբար անդրադարձ է լինում նաեւ աղրբեջանական մամուլում, ինչն էլ աւելի է խորացնում աղրբեջանական հասարակութեան բացասական վերաբերմունքը հայ ժողովրդի հանդէպ²⁴: Հետեւաբար, ա-

24 МАМЕДОВ ДЖ.- МАМЕДОВ М., Информационная война выходит на первую план, “Зеркало”, 22.05.2004.

մին ինչ անել, օգտագործել բոլոր հայանպաստ գործօնները՝ հարցն ըստ արժանային ներկայացնելու համար:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել՝ Արցախը հայ ժողովրդի ծագման ու պատմական երթի հիմնական օրրաններից մէկն է եղել եւ միշտ կը մնայ հայաբնակ: Արցախը երբեւիցէ միայն վարչական առումով է ընդգրկուել ոչ հայկական վարչական միաւորի կազմի մէջ, ինչպէս եղաւ արաբական ու պարսկական տիրապետութիւնների ժամանակ: Ընդ որում միշտ Արցախն ու Ուտիքը հանդէս էին գալիս միասնական եւ միեւնոյն պատմական բախտին էին արժանանում: Ունենալով կարեւորագոյն ուազմավարական դիրք ու աշխարհագրութիւն՝ ողջ պատմութեան ընթացքում այն եղել է տարածաշրջանը նուաճել ցանկացող բոլոր դերակատարների ուշադրութեան ու ռազմական հաշուարկների կիզակէտում, սակայն, բարեբախտաբար, շնորհիւ իր լեռնային բնութեան եւ բնակչութեան ազատատենչութեան ու իսկախութեան, Արցախը միշտ արժանի հայկահարուած է տուել ցանկացած հզօրութեան նուաճողի՝ դարերի ընթացքում մնալով հայկական այն կենտրոններից մէկը, որոնք եղել են կիսանկախ նոյնիսկ ամենածանր լծի ներքոյ:

Գոյամարտի ընթացքում ազատագրելով բուն հայկական տարածք՝ հայ ժողովուրդը զգաց յաղթանակի բերկրանքը եւ, արդիւնքում, աճեց նրա վստահութիւնը սեփական ուժերի եւ պայքարի արդիւնաւէտութեան նկատմամբ:

Ազատագրուած տարածքները, լինելով ժողովրդի յաղթական ոգու պտուղներից մէկը եւ ինքնավստահութեան հիմնական հիմքը, թշնամուն տրուելու դէպքում ե՛ւ հայկական, ե՛ւ աղբբեշանական հասարակութիւնների հոգեբանութիւնում կը կատարուած հայավնաս. փոփոխութիւններ: Հայ ազգի մէջ հիասթափութիւնն առաջնային կը լինի, եւ ժողովուրդը կը սկսի մտածել, որ ի զուր էին այնքան զոհերի թափուած արիւնը, ինչը կը յանգեցնի սեփական երկրի ու ուժերի նկատմամբ թերահաւատութեան: Սակայն տեղին է փաստել նաեւ որ պատերազմելով՝ երբեք խաղաղութիւն չես ունենայ, ուստի եւ անհրաժեշտ է, որ երկու հասարակութիւններն էլ գիտակցեն, որ քանի որ դատապարտուած են կիսելու նոյն տարածաշրջանը, մի օր ապրելու են խաղաղ. եւ որքան շուտ, այնքան լաւ:

Summary

HISTORICAL-POLITOLOGICAL COMPARATIVE ANALYSIS OF NAGORNO-KARABAKH CONFLICT

EDGAR KALANTARYAN

During the whole history of humanity the Caucasus has always been in the middle of clash of different civilizations. The region has a pivotal place in the geopolitical calculations of at least three major world actors (Russia, the USA and the EU) and it's here that the interests if these three and two other regional major actors (Iran and Turkey) collide.

With its geopolitical position Nagorno Karabakh (Artsakh) has a strategically favorable location in the Southern Caucasus, therefore the Artsakh conflict and the closed borders followed as a result obstruct the super powers from fulfilling their global plans in the region. Artsakh has always been inhabited by Armenians. The Soviet authorities, neglecting the fact of national priority in Artsakh, made Artsakh as a part Soviet Azerbaijan in 1921, hence laying the foundations of Artsakh conflict. The conflict burst into a war in 1988 and since the ceasefire in 1994 it has remained unsolved. During the on-going negotiations Azerbaijan first of all demands acknowledgement of territorial integrity, which foresees "return" of liberated territories, resettlement of refugees in those areas and, in the end, discussions about the status-quo of Artsakh, which is definitely unacceptable for the Armenian part, as for them the status-quo of Artsakh, self-determination of the people and the link with the Motherland are primary issues.